


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՕՏՏԻԱՆ

Նամակ կամ որևէ գրութիւն պետք է ուղղել առ Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի ԳԱՂԱՔԱԿԱՆ (Նամակատարի) Թիւ.

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUICE
LE CAIRE (EGYPTE)
Boite Postale No.



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահլիճ.	60
Վեցամսեայ »	35
ՊՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Տրակֆ	20
Վեցամսեայ »	12

ԲԱՃԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՈՒԿ Եւ թղթատարի ծախքը Խնթարութեան վրայ է:

Խնթարութեան ուղղուած գրութիւնք կէջէն տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԿ Կանխիկ վճարելի են

ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ՎՃԻՈՇ

Ո՛ր է և է ազգի մէջ, պարզ ժողովուրդի ծոցէն փրթած տարբեր դասակարգ մը գտնուած է միշտ, ո՛ր իսկապէս վեար, այլ շատ անգամ յիշորտուն, որ ինքզինքը կոչած է, կամ երկրին օրէնքները զինք կոչած են, «Արգարութեան աթոռ» կոչուած տեղերու վրայ բազմալու և միեւնոյն երկրին ու ժողովրդեան քաղաքային և այլ վարչական հոգերը ստանձնելու պայմանաւ որ՝ ուղղութիւնը և արգարութիւնը ձեռքէ չ'թողուի և ժողովուրդին մէջ պատահած ամեն կարգի կնճառութիւնները և ուրիշ հոգեր թեթեւցնէ:

Այս դործին վերաբերեալ նուիրական պարտականութեանց բազմակողմանի դասաւորում մը, հետեանք բնական օրինաց, այսինքն խղճի, բայց մաքուր խղճի թելադրութիւններով գործուած, դրուած է անոնց ափին մէջ:

Առհասարակ ամեն տեղ, այս դասաւորեալ պարտականութեանց Օրէնք անուր տրուած է, որոյ գործադիր իշխանութիւնն է վերոյիշեալ դասակարգը, իսկ ընդհանրական համարառուն, դասաւորը և վճառատուն հանրութիւնն է և պիտի մնայ:

Բնական օրինաց այս տրամադրութիւնը անյիշելի է և ուրիշ տեսանկյնի գործութիւն մը չ'կայ որ իրաւարարի դերը ստանձնէ այս երկուքին մէջ:

Արարչագործութեան առաջին օրէնք, երբ «Արասցուք մարդ» ի վեհապանծ հրամանը հնչեց և դրախտի հրաշակերտը աշխարհի իշխան դրուեցաւ, իրաւասութեան այդ լիազօրութիւնը իր հետն ունեցաւ, որ աճեցաւ ու բազմացաւ ազգաց և ժողովրդաց անուամբն ու զարգացմանը հետ:

Բայց, ո՛րչափ հանրութեան անբռնաբարելի այս լիազօրութիւնը աճելու և ուճանալու շաւղին մէջ մտած էր, նոյնչափ ալ փառամոլ օրինազանցներու վտանակը համեմատեալ աճած և զօրացած էր:

Ատնք՝ առանց ո՛ր է տարակոյսի, մեզի համոզելու հանգամանքը ունին թէ՛ հանրութիւնը շատ անգամներ իր վճռելու բացարձակ իրաւասութիւնը լիովին ի գործ դնելու մէջ թերացած է՝ և այսպէսով յաճախ արգարութեան ակոռններուն վրայ սողացած են գետնաբարձ արարածներ և մըսս կողմանէ հանրային ա-

նաչառ և ահարկու վճիռը փութացած չ'է ջախջախել, փշրել ու անհետացնել զանոնք կաւէ ամաններու պէս:

Համայնքի այս վճռական քայլը իրականէն պատմականին մէջ պիտի փոխադրուէր բնական ճամբով ու այսպէս ապագայ սերնդոց փոխանցուի, որ հետզհետէ զանոնք ուղղութեան ճամբուն մէջ պիտի առաջնորդէր:

Ահաասիկ մարդկութեան ինքնիրեն ընծայելիք իրական օգուտներն, որ երկու պատճառներով չ'է կարողացած կանգնել իր բարոյական բարձրութեան փափաքելի աստիճաններուն վրայ:

Նախ՝ իրեն տրուած զօրութիւնը և իրաւասութիւնը լաւ գործածել զիտացած չ'է:

Երկրորդ՝ ինքզինքը կեղծելու վարժեցնելով, անտարբերութեան մէջ մխրճած է:

Որչափ ալ մեր վերագրեալ համառօտ տեսութեամբ ընդհանուր հայեացք մը պարզած ըլլալու տպաւորութիւնը թողունք ընթերցողին վրայ, այսու ամենայնիւ մեզ արգելող մը չ'պիտի ըլլայ կարծենք, երբ մեր հայեացքները գտնուած միջավայրնուս մէջ փոխադրելով, աւելի չօշակելի օրինակներ ներկայացնենք մեր ընթերցողաց և ստիպենք զիրենք աւելի լուրջ կերպով մտածել իրողութեանց վրայ. մանաւանդ՝ երբ անոնք սրտի և զգացմանց վերաւորանք կը պատճառեն Այս միջոցով պիտի կրնանք գործնական մարդոց աշխարհին մէջ հետզհետէ մեր մասնաւոր տեղը դրաւել:

Ինչպէս ամեն ազգ ունի իւր հանրային գործիչներն, մենք ալ մեր գտնուած միջավայրերուն մէջ նոյնը ունինք և առանց վարանելու պիտի կրնանք ըսել թէ՛ աւելի չընթացեցնելու ու արդարափրութիւն պակասած է անոնցմէ, քան ինչ որ մինչև ցարդ իրենք կը կարծեն թէ մեր ըսածին պէս չ'է:

Շատ մը օրինակներէ վերջ, որոնց վրայ պարբերաբար և ստեպ խիստ լեզուով քննադատած ենք զիրենք այս էջերուն մէջ, վերջին դէպք մը առիթ կ'ընծայէ մեզ անգամ մը ևս յիշեցնելու իրենց թէ՛ հանրութեան, կամ անոր մէկ մասին վրայ իրենց ի գործ դրած անտեղի ու այլանպակ ճնշումը՝ որ մը առիթ պիտի լինի, որպէսզի ժողովուրդին զրկուած զաւակներն իրենց վերջնական վճիռը արձակեն՝ զիրենք արգարութեան ակոռներուն վրայ կարգի

հրաւիրելով. «ալ բա՛ւ է, պիտի ըսեն, ինչ որ մեր և մեր ազգին անունով շահատակեցիք»:

Եւ այդ շատ հեռի չենք գտնուիր մենք, հետեւելով մեր վարիչներուն ունեցած թեթեւքին. ընթացք՝ որոնք լաւ էր որ ամիրայական թուականներուն մէջ մոռցուէին: Կէթ այդչափ զարգացում ալ պահանջելու իրաւունքը չը պիտի ունենանք մեր աղաներէն:

Ահաասիկ օրինակ մը, և վերջացնեմ. հանրութեան վճռոյն թողով մտօրինել ինչ որ արժանն է:

Որբերու ազելսարչ վիճակը և քաղաքիս Որբասիրացներու եռանդուն գործունէութիւնը ինկատի ունենալով, Օմտուրմանի (Սուտան) մեր ազգայինները իրենց մէջ Որբասիրացներու անունով (՝) հանգանակութիւն մը կը բանան և 2200 զըշ.ի գումար մը գոյացնելով, Առաջնորդարանի միջոցաւ Որբասիրացներու բաժնուելու համար կը զրկեն: Բայց Առաջնորդարանը՝ որ պաշտպանն է բուն Որբասիրացէն բաժնուած ուրիշ ընկերութեան մը, որք իր մասնաւոր պատմութիւններն ունի, հետեւեալ կերպով կը բաժնէ այդ գումարը չորս Որբասիրացներու մէջ:

- 1. Վասպուրականի Որբ. ընկ. 500
  - 2. Ակնցի ազգայնոց Որբ. ընկ. 500
  - 3. Առաջնորդարանէ պաշտպան. 1200
  - 4. Մայր Որբ. ընկ. Հայոց ....
- գումար 2200

Այսպիսի անօրինակ աշառութեան մը ի գործ դրուելը տեսնելով, Որբասիրացի Գործ. Ժողովոյ յարգելի Ատենապետը և Ընդհ. դիւանի Ատենապետը Առաջնորդարան կ'երթան բացատրութիւն մը պահանջելու, որ կը պատասխանուի թէ՛ իրենց ընկերութիւնը վաւերացեալ չ'է՝ Առաջնորդարանէն: Մինչդեռ անցեալ օրեր Առաջնորդի թղթակիցներէն մին կը գրէր թէ՛ երեք չորս ամսէ ի վեր Որբասիրացին կանոնագիրը Առաջնորդարանը կ'սպասէ ու չ'են քարեհաւիտ վաւերացնել...:

Առիթն է ուրեմն հարցնել իրենց թէ՛ ինչպէս և ինչու մէկ օրուան մէջ Մայր Որբասիրացէն լաւճուած մասին կանոնագիր մը վաւերացուեցաւ - եթէ այս վաւերացումը ձեւականութիւնն չ'է և ո՛ր է իրական արժէք ունի. - որովհետեւ դրաւոր և հաստատուն ապացոյցներ կան, որ այդ վաւերացեալ կոչուած ընկերութեան հաստատութեան թուականը, 16 օր առաջ գրուած է. ըսել է, Առաջնորդարանի, սու-

մարներն ճգախեթի կը նմանին որ ուզածնուն չափ կ'երկարի ու կը կարճնայ:

Այլ ժամանակն է բացատրել թէ՛ ինչո՞ւ այս աչառութիւնը և զրկանքը ի գործ գրուած է Մայր Արքայապետին վրայ:

Առաջնորդարանը գիւանագլխի մը ունի որուն համար կ'ըսեն թէ՛ առ ի չգայէ լաւագոյնին, ամեն ինչ է և Տէրը դարձած է առաջնորդարանին, ( ) և որովհետեւ հարուած մը տալ ուզած է Արքայապետին, որ զինքը 25 անգամակիցներու ձայնով երկիցս դատապարտած է Գործ. ժողովոյ Ատենապետութեան հրաժարեցուցած է, այժմ այդ միջոցներուն զիմամ է:

Եւ զարմանալիքն որն է. այս ամենը ի գործ գնելէ վերջ, կը պարծենայ եղբր թէ՛ Առաջնորդարանը և ժողովուրդը խաղաղք ըրած է:

Ահա իրողութիւն մը, ահա հանրային հաստատութեան մը և հանրութեան դրամով երկար տարիներ ինքը և իրեննոր սնուցանող մէկը, որ ապերախս կը գտնուի, և Առաջնորդարանի ու հանրութեան յարաբերութեանը մէջ լայն անջրպետ մը բանալու պատճառ կը դառնայ:

Հանրութեան արգասիք վճարը, որոյ մասին ի վերեւ բացատրութիւն մը տալ փորձեցինք, պէտք է որ գործընդի հանրութեան իրաւանց դէմ ոգորոշներու ճակատին:

Որչափ յսպաղի այս վճարը, այնչափ պիտի տուժէ ազգութիւնը:

Եւ  
(\*) Բարեկամ մը Տիրա Յ. Օհանեան այս մասին կը գրէր մեզ Յունիս 8 թուակիր նամակաւ մը, ինչ ինչ մանրամասնութեամբ, որ ի հարկին պիտի հրատարակենք:

**ԱՒՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՒԱՆ**  
**ԹՈՒԹՐ ԿԱՄ ՏԵՌԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԻ**  
(Մայապը)

Գիտնալու է որ միշտ արեւնաճողութիւն, չ'պատահիր եւ երբեմն ալ տեստեսութիւնք ինքնին կը փարատին շնորհիւ առոյգ կազմութեան:

Ունանք կը կարծեն թէ՛ տեստեսութիւնք առողջութեան ապացոյց են. այս հանդուրդը լոկ թիւրիւնացութեան կամ անգիտակցութեան արդիւնք է: Սակայն ստոյգ է թէ՛ ի վաղուց տեստեսութեանը չարչրկող անհատի մը վրայէն յանկարծ այս ախտին աներեւութեանը կամ խախտումը կրնայ տեղի տալ այլ եւ այլ հիւանդութիւններու, ինչպէս. դըլիսագրութիւն, կուճքի հիւանդութիւն, անւարտողութիւն եւ այլն: Այս երեւոյթը կատարելագոյն բանաւոր եւ ընդունելի է բնախօսական տեսակէտով, ըստ որում, եթէ արեւնը՝ որ ձանձրայ ըրած էր տեստեսութեանը մերթ Կուր ժայթքել սրբանէն, վերջապէս փակուած դանկ իր հանգէպ սովորական ուղին, պիտի փնտռէ այլուր տեղաւորուել կամ հանգչիլ, եւ յորմէ պիտի ծագին այլ եւ այլ կենդանութիւններ մարմնոյն մէջ քանի մասերուն մէջ՝ որք սերտ կերպով կը հազորդակցին իրարու հետ: Այս երեւոյթը այլեւ այլ ժամանակ նկատուած, քննուած եւ ատուուած է. բայց կրնայ մերթ կորսնցուցիլ իր հաստատութիւնը ու ժող ու կորովի կազմութիւններու մէջ:

Տեստեսական պարագաներու ժամանակ նկատողութեան արժանի են նաեւ սրբանին ուսուցիչները շրջապատող ձիւղուածներն ու կեղերը. առնք խիստ դառնակակիծ են, եւ կը հոսեցնեն գուգնաքանակ հեղուկ մը անգոյն կամ գեղորակ:

ԴԱՐՄԱՆՔ. — Երբ միւրեայն պարզ արեւնակուտակում մ'է սրբանին մէջ տեղի ունեցածը, հիւանդին առջին ու գլխաւոր ընկելք բաներն են. — Հանգիստ անուշ, ժուժկալ ըլլալ ամեն բանի մէջ, մանաւանդ սնունդներու մասին, ողջապահիօրէն կենցաղաւարել, աղի կերակուրներէն զգուշանալ՝ որք կերակրոց տարբադարձութեան արգելք ըլլալով, գիտարտաւարութիւն յառաջ կը բերեն, որ ամեն հիւանդութիւններու նախնական պատճառն է: Համեմտեցնելով, ոգիւնը ընկելք ու միւր բնուէ՛ր չ'գործածել, ալիւրոս կերակուրներ ուսել (զարի, համար, ցորեն եւ այլն) կերակրոց ժամերէն գուր բնուէ չ'ուսել, ծիւղէ բարբարձակապէս եւ կենալ: Վաղուց արգելքութիւնը դարձանել թանջական շնչերակներուն գրգռուել հանդարտեցնելու համար եւ առ այս առաստօրէն թարմ պտուղ ուսել, ընդհանրապէս առաւօտները, եւ գիշերները զով որորովայնաբարձիկ գործածել՝ որով հրաշալի արդիւնքներ ձեռք բերուած են, վերջին տարիներս, այս օրինակ պարագաներու մէջ: Սակայն, որպէսզի ընդերները լաւ մը մարտուն կուտակուած թոյններէն՝ շարաթիւ երեք անգամ գաղջ ջրով գրելն անուշ, երկու օրն անգամ մը պար ջուրի մէջ թրջուած սուսնով խանձարուրուիլ կէս ժամու չափ, եւ ապա մաքուր ձիւթաւով կամ կարանաւթով (վաղըրիկ) մերթը կարելու տեստեսան չ'փուլ, ժամու մը չափ մարմնաւորը ընել բացօթեայ վայրերու մէջ եւ շէ ժամն մի անգամ կ'անոնաւոր կերպով ձեռնէ կըթալ: Պահ մը մտաւորական աշխատութիւնները զանց ընել, եւ կարելի եղածին չափ քնանալ, միայն գիշերը քնանալ: Միշտ կակուղ արժող գործածել՝ որ լաւագոյն սովորութիւն մը կրնայ սեպուիլ այս հիւանդութեանը տեստեսող անձին համար: Ջրաբուժական դարմանները մեծ դեր կատարած եւ միշտ ծափահարութեանը ընդունուած են տեստեսաներէն: Առաւօտները սովորական պաղ, կամ ստաւակին հարեւանանայի ջերմաչափով 39 աստիճան, անոքիչ ու կազմուրիչ, տաք բաղնիքներ վստահարար յանձնարարելի են. բաղնիքէն վերջ կէս ժամու չափ բացօթեայ պտոյտ մը կատարել անհրաժեշտ պայման մ'է: կէս օրէն վերջ կամ երեկոյններն ալ 44-53 նստարարիք անուշ, ջրային դրութիւնը խաղաղեցնելու եւ որովայնակոնքին ընդերները անոքելու համար, յորմէ յետոյ հիւանդը հանգարտ քուն մ'ալ քաշելու առանձնաշնորհուրը կ'ունենայ: Չով, մաքուր ու սուստ ջուր խմել, եւ աղտոնութիւնները արտաքսելու միակ եւ կրկնապարգեւ կըսնակըն է այս՝ զոր բնուէ զանց ընելու չ'են մարդիկ:

Եթէ ուսուցիչները խիստ բորբոքու են, հարկէ անոքիչ ու կակղիչ շեշտածութիւն (1) գործածել սրբանին վրայ թափանին մէջ բուրովին եւ 33-33 աստիճան տաք ջուր ներարկել փոխն ի փոխ, պաղին անողութիւնը ըլլալու է կէս, խի տաքիքը երկու վայրկեան, եւ զոր շարունակելու է այսպէս 10-15 վայրկեան: Եթէ հիւանդը այս ներարկման գործածութեան տանն մերկ է, հարկ է վրան բուրդէ վերակ մը տալ եւ ոտքերը տաք ջրով լի ամանի մը մէջ դնել:

Եթէ արեւակուտակուել (զնժեպի մ) շատ աւելի կակղեցուցիչ ու հասուրը առատ է, զով ջուրի, կիտրոնաջուրի կամ քսոյսխան կիտրոնաջուրի մէջ թրջուած վերարարձիկ դնել սրբանին վրայ, ճնշուել:

Ոչ նուազ օգտակար են նաեւ պաղիւ-

(1) Թերեւս դարմաններէն ունանք անհասկընալի թուին ընթերցողին, եւ զորք չ'ենք կրնար առ այժմ երկարօրէն բացատրել այս անցուկ էջերուն մէջ, սակայն օգտուիլ եւ յոռաւորելու ուղղութեամբ կրնայ մասնագետ բժիշկներու գիմել կարգուր ծանօթութիւններ սասնալու համար: Ձեռնաստիճութիւն եւ այլ բաներ հայ բնագրոց մէջ չ'գտնուելով, մենք մեզնէն չ'ենք ստիպուեցանք խոնարհ սրբար:

զի փոշին կամ արեւի, որք պատանով կրնան հաստատուիլ պահանջուած կէտին վրայ, նուազ քանակութեամբ: Մեկտնի գլուխներով պատաստուած տաք բուսաջուրի, եւ կամ պարզ բայց խիստ տաք ջուրի մէջ թրջուած, եւ օրը մէկ քանի անգամ հիւանդ մասին վրայ գիտեցուած վերարարձիկներէն եւս բուժիչ արդիւնքներ ձեռք բերուած են:

Արեւը զաղրեցնելու համար հազարուրեւուկի ջրով կամ լեզուով ջրով թեթեւ գրելն անուշ գերազանց կը նկատենք: Վերջին տարիներս մարմնումն (մասած\*) եւս գեր սկսաւ խաղալ տեստեսական պարագաներու մէջ, բաժանուել չ'է բնու տարակուսելի, երբ ենթակայն դեռ պատանի է եւ մարջողը վարժ ու հոռու: Մարմնուր որովայնին վրայ եւ թափանին մէջ տալու է, որ կը կահանուտուրէ եւս սոյն գործարանին մէջ տիրող արեւն շրջանի խանգարուելու:

Տեստեսական այտուցը մերթ դուրս կը ցցուի եւ սաստիկ վիշտ կը պատճառէ. այս շրջանին, հիւանդապահը կամ հիւանդը խնամող անձը՝ զայն անկողնոյն մէջ արոււկներուն կրկնելով զգուշութեամբ սրբանէն ներս հրելու է կուտուր, միջատուտով կամ ցուցաւստով, պայմանաւ որ՝ եղունքները կարուած յարդարուած եւ գործածելի ձեռքն ալ մէկ հինգ համեմատութեամբ ոսկերքական թթուուտի լուծումը (սոլիսիոն ճ'աւիս պորիֆ) հակահետուած ըլլայ:

Ուսանող Պալի Առողջապահական  
Զուիցերի Հաստատութեան  
Կ. Գ. ՌԻՉՈՒՆԵԱՆ

**ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷԷՆ**  
Գահիրէ 21 Յունիս  
Պատ. Տնօրէն  
«Արշալոյս» լրագրի  
Ի Գահիրէ:

Ձեր օգտաշատ թերթի 83րդ, թուոյն մէջ յիշած էիք թէ՛ Սերատոյցի հայոց Եսահարական Ընկերութեան ընդհանուր ժողովոյ դիւանի կողմէ նախկին մը ստացած ըլլալով, իրենց ընկերութեան վերաբերեալ միջադէպը հերքելիք կը պահանջէին:

Արգ. Տէր Տնօրէն, ես ստորագրողս եւս ակնարկուած յիշեալ ընկերութեան անդամակից եւ սոյն խնդրոյ մասին ալ խիստ մտանք դիտող ու հետեւող լինելով, ցաւ ի սիրտ կը փութամ ինչպէս ի գիտութիւն օրտաշատ լրագրիչ ընթերցող պատուարժան հասարակութեան եւ ընկերութեանս բոլոր անդամոց, որ սոյն միջադէպ նկատուած կամ դատուածը՝ պարզ միջադէպէ դուրս կանխաւսածեալ մասնուած սպաս մեքենայութիւն ըլլալով բոլորովին վերջ չ'է գտած, լուծումը ընդհանուր ժողովոյ սրբանին յանձնուելով:

Փափաքելի է որ սպասուած արդիւնքն ձեռք բերուելով, ընկերութեան քայքայման տեղի չ'տրուի վերջ ի վերջոյ:

ԱՆԴՈՒՄ ԽՆԴՐՈՅ ԱՌԱԿԱՆ  
ՇԱՀԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

**ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ**

ԺԱՆՏԱԽՏ. — Ահաւասիկ Տր. Փինքիկ Պէյի ներքին Կործերու նախարարութեան հազարուած շարաթական տեղեկագիրը:

1900 Յունիս 10 ին վերջացող շարթուան մէջ, ժամտախտի եօթը դէպք երկու մահ հաստատուած են Բօր — Սալիտի մէջ, իր պատուի միւս քաղաքներուն մէջ ոչինչ:

ՊԱՅՆՐԱՂԴԱԿԱՆ ԱՏԵԱՆ. — Պատերազ-

(\*) միւրեայն մասնակցներու գիմել:

մական ատեն մը գումարուեցաւ կառավարական պալատին մէջ՝ դատելու համար, Աստիկան մը որ ամբաստանուած է միւսին զօրանոցին մէջ իւր ընկերներէն գողութիւն ըրած ըլլալուն համար:

Երկրորդ մը՝ կամաւոր կամ անխոհեմութեամբ, իրեն խնամքին յանձնուած գող մը փախուստը ձգած ըլլալուն համար: Երրորդ մը՝ երկու կառապաններէ պախաշիջ ընդունած ըլլալուն համար:

ԱՉԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ. — Ետեւոր առաւօտեան ժամը 4ին, Աղեքսանդրիոյ մէջ՝ Պորսայէն Օթէլ Ապառ առաջնորդող պողոտային վրայ մանկամարդուհի մը դիակը գտնուեցաւ. զոր հիւանդանոց փոխարկեցին գիւղընթիւն կատարելու համար:

Մանկամարդուհիին վրայէն ծրանտական հիւպատոսին ուղղելու նամակ մը գրտուեցաւ իրեն մեռնելու հաստատ որոշումը ծանուցանող, որուն շարժառիթն է եղբոր գէպի իր հայրենիքը զգացած կարօտը և անկէ յառաջացած թեթեւ տկարութիւն մը:

ՈՒԻՏԱԽՈՐԲ. — Եգիպտական վերջին ուխտաւորները որոնք տակաւին Եամպօ կը գտնուին, այսօր 24 Յունիս կտրուի շոգեանով մեկնեցան:

ԲԵԹԻՐՈՒ ՀՈՐԵՐԸ. — Եգիպտական կառավարութիւնը արտօնած էր անգլիական ընկերութեան մը ձէպէլ — Չէյթի շրջակաները բէթթօլի հորեր փնտռելու համար:

Այս խուզարկման պայմանաժամը միմիայն տարի մ'էր, որն որ կը վերջանայ 1900 Յունիսին. այսինքն այս ամիս:

Սիր էլզին Բաւր յանուն արտօնեալ ընկերութեան ազերտագիր մը ներկայացուց նախարարաց ժողովին յայտնելով թէ՛ մէկ տարին բաւական չ'եղաւ սոյն խուզարկման որով պայմանաժամի յաւելում մը ևս կը պահանջէ:

Կը տեղեկանանք թէ տարիներ առաջ մեր ծանօթ ազգայիններէն Տիար Կարապետ Միհանօֆ վերոյիշեալ հորերը գտած և պէտք եղած դիմումները ըրած է թէ և՛ սակայն ինչորք ցարդ առկա մնացած է և այսօր նոյն հորերը շահագործելը յանձնուած է անգլիական վերոյիշեալ ընկերութեան (Մ. Խ.):

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարիկ 19 Յունիս. — Թա-Քուի մէջ երկու անգլիական պատերազմական նաւերու կորուստը հաստատուած է:

Թա-Քուի բերդին վրայ եղած յարձակման ատեն չորս հարիւր չինացիք սպանուեցան, եւրոպական կորուստները թեթեւ են:

Ճրանսան երկու վաշտ և երկու մարտկոց կը զրկէ Չինաստան. Գերմանիան երկու վաշտ, և Անգլիան հնդկական բանակէն շատ մը վաշտեր:

Լոնտրա 20 Յունիս. — Թայլանդ երէկուան թուականաւ Եանկայէն կը տեղեկանայ թէ՛ Լի — Հոնկ — Չանկ ստիպողական հրամանի մը վրայ, Գանթօնէն մեկնեցաւ Փէքին երթալու համար:

Կ'ըսուի թէ երեկ Անգլիական դրօշակը կը ծածանէր հարաւային գրան վրայ, որ կը նշանակէ ծովակալ Սէյմուրի գալուստը:

Հոնկ — Գոնկէն Թայլանդին կը հեռագրեն թէ՛ Պօքորընբու շարժումը կը սարածուի Աւէսթ — Ռիվերի երկայնութեանը վրայ:

Ճրանսան երեք պատերազմական նաւեր կը զրկէ Չինաստան. նաև ծովային հետիոտն վաշտ մը և երկու հրետանիի մարտկոց. Գերմանիան ծովային հետիոտն երկու շոկաւ կը զրկէ:

Լոնտրա 20 Յունիս. — Թա-Քու ի գրաւման առթիւ Անգլիացուց կորուստը եղած է մէկ մարդ սպանուած և 13 վիրաւորուած:

Ռուս զօրաբաժինը կորսնցուց մէկ ըսպայ սպանուած և երեք ալ վիրաւորուած 16 մարդ սպանուած և 67 վիրաւորուած:

Եանկայ 10 Յունիս. — Ամիրալ Սէյմուր և Եւրոպական զօրաբանակները Բէքն հասան:

Լոնտրա 21 Յունիս. — Թայլանդի գրածին նայելով, Լի — Հոնկ — Չանկ կիմացնէ թէ իր պաշտօնն է միջնորդ մ'ըլլալ Չինաստանի իր Տէրութեանց միջև:

Տէյլի թէլէկրաֆ, Եանկայէն ուղղուած հեռագրի մը նայելով կ'ըսէ թէ՛ Թա-Քու ի առաջին ամրոցները ձաբոնաց կողմէ զարնուած են, երկրորդը, Անգլիական զօրաց կողմէ և երրորդը, Գերմանաց և Ռուսաց կողմէ:

Բարիկ 21 Յունիս. — Բարձր Խորիվ հիւանդ Բոս — Վիքթորիա հասաւ. նորին Բարձրութեան հիւանդութիւնը ժանտուկի նըշաններ ցոյց կուտայ, որով ստիպուած է ըլլալ քուարտան մէջ մնալ:

— Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Կոնստանտին Սոբոլեւի փոխարինման հարցը:

— Թա-Քու գտնուող ծովակալները Թիէն — Չինի օգնութեան համելու համար օգնազօրաց կ'ոպանեն:

— Պ. Պրօտրիկ, խորհրդարանի մէջ յայտարարեց թէ՛ եօթը օրէ ի վեր ծովակալ Սէյմուրէ ու է լուր մը առած չ'ունի:

Ա Չ Դ Ե Ր

Կեսարացի երիտասարդ մը. Պ. Կարապետ Իննէճեան, ութ ու կէս ամիսներէ ի վեր անհետացած ըլլալով, ծնողքը յուսահատած իր մասին ո'ւ է տեղեկութիւն մը չ'ստանալուն համար, թերթիւ Տիօրինու գիւմած են, ինչորքով որ յիշեալ երիտասարդի ուր գտնուելու մասին տեղեկութիւն մը ստանալով իրենց հաղորդենք:

Կը ինչորքնք ուրեմն մեր Պատ. ազգայիններէն որ եթէ կը ճանաչեն կամ գիտեն ուր գտնուիլը վերոյիշեալ երիտասարդին, բարեհաճին երկտողիւ մը իմացնել թերթիւ Տիօրինութեան, յիշեալ երիտասարդին յուսահատ ծնողաց սիրտը հանգարտեցնելու համար:

Գաղաքի Գալտեան երկսեռ վարժարանի Տիօրէն Տիար Յ. Սեթեան հետեւեալը զրկած է մեզ ի հրատարակութիւն:

Գալտեան վարժարանի երկսեռ ուսանողաց տարեկան հարցաքննութիւնք կ'սկսին յառաջիկայ երկուշաբթի 25 Յունիս և պիտի տեսն մինչ 30 Յունիս շաբաթ:

Թիլիթու հրատարակութիւնը տեղւոյ

անձկութեան պատճառաւ Չորեքշաբթի օրէն պիտի սկսինք:

Թերթիւ ամենակարեւոր աշխատակիցներէն Ա. Նազչեան (ԱՎՕ) և Մարի Պէյլէրեան (ՄԱՌԻ) որ ժամանակէ մը ի վեր կ'արտա մեկնելուն պատճառաւ դադարեցուցած էին իրենց աշխատակցութիւնը, այս անգամ կը վերսկսին կ'արտա մեկնելու իրենց մեզ և առաջիկայ չորեքշաբթի օրուան թուով պիտի հրատարակենք ՄԱՌԻ Տրտունց և շաբաթ օրուան թուով ԱՎՕի Անազալը ոտանաւորներն:

ԱՎՕ, որ ամսոյս 12ին Ռուսաստան մեկնած է, քիչ ատենէն իւր նշաժին հետ շու պիտի վերադառայ ՆՈՐԱԿԱՉՄ ԺՈՂՈՎՄԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ՝ Արշաղոյսի Բ. տարւոյ սկզբնաւորութեան հետ հրատարակելու համար « Ա Ր Տ Ե Մ Ի Ս » անունով հանգէս մը, որոյ ծրագրի մասին հետըզհետէ մանրամասն տեղեկութիւններ պիտի հաղորդենք մեր ընթերցողաց:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Ս Պ Ա Ն Ի Ա Ե Ի Ա Ն Գ Լ Ի Ա

Սպանիոյ նախարարապետ Պ. Սիլվերա յայտարարեց թէ՛ ո'չ ինք և ո'չ իր նախորդները Պալէարեան և կամ Գանարեան կղզիներու գնման համար Անգլիոյ կողմէ ու է առաջարկ չ'էին ընդունած. աւելցուց թէ՛ առանց Սպանիոյ սպառնով մերժման եւրոպական տէրութիւնները իրենց շահուն սպառնացող այսպիսի գիրք մը Անգլիոյ թողուելուն երեք չ'պիտի յօժարէին:

Թ ՈՒ Ր Ք Ի Ա

Սուլթան համիտ, Պոլսոյ սպառայ համալսարանին կազմակերպութեան համար Պ. Վամպէրի պաշտօն յանձնեց, յայտնելով թէ՛ համալսարանին լեզուն թրքերէնէն վերջ գերմաներէնը ըլլայ: Պ. Վամպէրի պատասխանեց թէ՛ գերմանական լեզուն ընտրութիւնը գործնական չ'է, ուրեմն գաղղիներէն աւելի յարմար է ըստ իւր կարծիքին՝ ակադեմիական ուսուցման երկրորդ յարմար լեզուն ըլլալուն համար: Սուլթանը այս կարծիքէն գոչ չ'մնաց:

Ռ ՈՒ Ս Ի Ա

— Թիւն — Չինէն կը ծանուցանեն թէ՛ 4000 Ռուս զինուորներ 20 թիւթանօթով ցամաք ելած են և կը յառաջանան գէպի Փէքին:

Նույն — Թան կը հաստատէ թէ՛ Եւրոպացուց շահերը ու կեանքը պաշտպանելու համար անշուշտ Ռուսիա միւս տէրութեանց հետ համաձայնութեամբ պիտի գործէ:

Բայց նոյն թերթը դիտել կուտայ նաև թէ՛ սոյն սահմանակից ընդարձակ տէրութեան հետ լաւ յարաբերութիւններ պահելու համար, Ռուսիա չ'է կարող արգիլել Եւրոպացուց այն շահերը՝ որ Չինաստանի և Չինական ժողովրդեան շահերուն գէմ կը կհանն. և մանաւանդ Անգլիացուց շահերուն, որուն համար թերթը ասելու թեամբ կը խօսի:

Ընդհակառակը նոյնքի և Ռուսիա եւրոպական դիւանագիտութեանը միութեան և համերաշխութեան կողմը կը հակին. որ տիրող ներկայ տագնապակից կացութեան ամենանպաստաւոր միջոց մը կը նկատուի այս:

ՊՕՒՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

Պատգամաւորներէն միոյն, Պ. Վասսէլ- սի, Շիքակոյի մէջ երբ հարցուած է Պօէրնե- րուն դէպի Ամերիկա գաղթելու խնդրոյ մասին, ամերիկեան թերթերուն նայելով, հետեւեալ կերպով յայտարարութիւն մը բրած է.

«Թեպետեւ մենք վստահ ենք մեր ազատութիւնը ձեռք ձգելու. կամ ամբողջովին և կամ մասնակի, գրեթէ տարուան մը միջոցի մէջ, սակայն ապագան մեզի տակաւին անձանօթ է: Մեզի գաղթականութեան թոյլտուութիւն մը եղած է, մենք զայն Պօէր ժողովրդին պիտի մատուցանենք, որը միայն պիտի կարենայ որոշել այն կամ ո՛չը: Սակայն կարծենք թէ պիտի մերժէ զայն, ժողովուրդը մինչև ցարդ որոշած է ամայի ձգել քաղաքները և պատրաստուիլ երկրին ներքին մասերուն մէջ, կարելի եղածին չափ անգլիական իշխանութենէն փախչելու համար »:

ՉԻՆԱՍՏԱՆ

Փէրինի պաշարումը տակաւին կը շարունակուի:

Հեռագրական, թղթատարական և երկաթուղեաց կայն. ամեն յարաբերութիւնք դադարած են:

Օտարականները Թիէն-Չինի և Շի-Ճուի մէջ յարձակումներ կրեցին, որոց նկատմամբ կառավարութիւնը չեղօք գերք մը բռնեց,

Թիէն-Չինի և այլ տեղերու օտարականները զինուած են:

Կրէթ Նօրթհէյն ընկերութեան հեռագրական թելերը ապստամբներուն կողմէ կտրուեցան, հետեւաբար, այսուհետեւ Փէքինէն եղած բոլոր հեռագիրները Ռուսաստանէն պիտի անցնին, որով մեծ յապաղում տեղի պիտի ունենայ լուրերու և հաղորդակցութեանց:

Փէրինէ հասած տեղեկութեանց նայելով Յունիս 10էն իվեր է որ քաղաքին փողոցներուն մէջ շարունակ կռիւներ տեղի կ'ունենան:

15,000 զինուոր Բօրթ - Արթիւր կը գտնուին, որոնք պատրաստ են դէպի Թիէն-Չին ճամբայ ելլելու:

Չինացի զօրքերը Պեկինգայի գետաանտան քարտուղարներէն միոյն վրայ յարձակեցան և սպաննեցին Փէրինի փողոցներուն մէջ:

Թունկ - Չաույի մէջ ապստամբները ամերիկեան միսիօնարներուն վանքը, ինչպէս նաև համալսարանային ֆլուպին ամարանոցը կրակի տուին: Եթէ երբէք զիւրին ըլլայ երկաթուղոյ գծերուն նորոգութիւնը, ամիջապէս օգնութիւնք պիտի հասնին արկածին վայրը:

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՍԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 22 ՅՈՒՆԻՍ 1900

6566 6457 2606 5595 9380 1490 587  
2308 6996 7561 547 8510 3518 5185  
1635 5498 6480 6808 9664 8146 902  
7718 5149 4415 2089 1948 8216

Տպագրութիւն ժողովրդային ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԲԸ

Օսկանի ղեկարանին ղիւնացի փողոցին մեջ:

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիրքեր, Հրատարակչութիւններ, Մանագրներ, Տեղեկագիրներ, Կանոնագրներ, Տոմարներ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագրութիւն և չարաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ:

ԿՈՊԵՐՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ:

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՍՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉՍՏՈՒՆ

Տաներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբարց տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքի մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպէֆիյե Շարխու Կանկէյ Օթէլ ՇէֆէրՏՍԻ ճիշտ գիւմայ թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրսը կուսովներ ի հարկին:

Ակրանսիական բնական մեծութեամբ Կենդանագիրներամերիկեան մեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միլիմետրիս:

Իւղաներկ և ջրաներկ պատկերներ և ընդ լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունին որքոց, Տէյէշոքրլուս և ընդ:

Իրեն գիտող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳՐՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրահիրէ

Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիգրան Կոստանեան պատիւ ունի ծանուցանել Արդոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր փառար-Մարտի խանութին մէջ պատրաստել Ենթակի սուրճին ամենաբարձր և անխարդախ տեսակէն իրեն գիտող յաճախորդներ օխան 16 զրջ ողջի հաշուով, զուտ ֆաւէ պիտի կրնան գնել. կըսոյ մէջ այլ ուղղամտութիւն գտնելով:

ՏՕՔԹ. Ա. Յ. ՔԵՐԵՍՈՒԹԻՆ

Ի Շարխու Գոթ-Պեյ, թիւ 20

Իր ՁՐԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կ'ես օրէ առաջ ժամը (ը. Ե.) 9էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիտող ուղղապատ հիւանդներու: 5-8

ԳՐԵՔ ՈՐԵՈՂՆԵՐՈՐԸ

Գահիրէի և չրճակայց գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իսասկան, Գարոցական, Իհասկան, Գրական Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ և Վիեննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալտեան վարժարան Հայոց Ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԵՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԹ  
Ապսին Շարխու Գալարի Թ/ա. 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար բոտիք ապրանքներով կեղծակամներ:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ակուպիցուերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տակունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 5-5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործաւ կատար յ'Ալեքսանդրիա: